



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՅ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Նորագույն տեղեկատվական  
տեխնոլոգիաների ազդեցությունը և  
դերը սովորողի հոգեբանական  
զարգացման գործում>>

Առարկան՝

Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Հախինյան

Ուսումնական հաստատություն՝ Օձունի թիվ 1 միջն. դպրոց

Երևան

## **Բովանդակություն**

1.Ներածություն: Հետազոտության նպատակները,խնդիրները:	3-4
2. Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ:	5-9
3.Նորագույն տեխնոլոգիաների դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում:	9-15
4.Եզրակացություն:	16-17
5.Օգտագործված գրականության ցանկ:	18

### 1. Ներածություն: Հետազոտության նպատակները, խնդիրները:

Ի՞նչ ենք հասկանում <<նորագույն տեխնոլոգիաներ>> ասելով, ի՞նչ նպատակ է հետապնդում հետազոտությունը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել, թե ի՞նչ ենք հասկանում <<նորագույն տեխնոլոգիա>> ասելով, ինչո՞ւ է անհրաժեշտ օգտվել նորագույն տեխնոլոգիաներից դասավանդման ընթացքում, ինչպե՞ս կարող են ազդել նորագույն տեխնոլոգիաները սովորողի հոգեբանության վրա:

Հետազոտության խնդիրն է ուսումնասիրել և բացահայտել նորագույն տեխնոլոգիաները, որոնք ճիշտ կիրառելու դեպքում կնպաստեն ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ուսուցման ռազմավարությունը հնարավոր է դարձնել բազմազան՝ դասարանում տեղեկատվական տեխնոլոգիաներն ինտեգրելով: Նորագույն տեխնոլոգիաները նոր սերնդի մանկավարժական տեխնոլոգիաներ են: Դրանց նպատակներն են՝ կենտրոնանալ որոշակի արդյունքի ձեռքբերման վրա, դրանց օգտագործմամբ գիտելիքներ ձեռք բերել, նպաստել սոցիալականացմանն ուսման գործընթացում, խթանել երեխայի ինքնության, քննադատական, ստեղծագործական և մտավոր զարգացմանը:

Ի՞նչ է տեխնոլոգիան: «Տեխնոլոգիա» բառը տարբեր իմաստներ ունի: Ընդհանուր իմաստով՝ որոշակի գործունեության իրականացման մանրամասն եղանակ է՝ հիմնված ընտրված մեթոդի վրա: Անհրաժեշտ է ուսուցչի գործունեությունն այնպես կառուցել, որ այն իր մեջ ներառի հաջորդականությամբ կատարվող գործողություններ՝ կանխատեսելի արդյունքի պարտադիր առաջխաղացումով: Իսկ դասավանդման մեթոդը ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները, որոնք էլ խթանում են աշակերտների ուսուցման գործընթացը: Մեթոդի արդյունավետությունն ապահովելու համար այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս

պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, ինչպես նաև, թե ինչպես են սովորում աշակերտները:

Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերն այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են սովորողներին մեր օրերում: Այս առումով առանձնանում է համագործակցային ուսուցումը, որը կոչված է վերացնելու բոլորին միաժամանակ սովորեցնելու առումով ավանդական ուսուցման հիմնական թերությունը: Կարճ ասած՝ շատ դժվար է և մեծ մասամբ անհնարին, որ ուսուցիչը կարողանա 30-35 հոգանոց դասարանին միաժամանակ ընդգրկել ակտիվ ուսուցման գործընթացում: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Ուսուցման ռազմավարությունը հնարավոր է դարձնել բազմազան՝ դասարանում տեղեկատվական տեխնոլոգիաները ինտեգրելով: Պետք է գտնել բազմազան միջոցներ տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու համար, որոնցից են համացանցը, հեռուստածրագրերը: Համակարգիչները կարող են օգնել օտար լեզուները դասավանդելիս, ինչպես նաև այլ առարկաների դասավանդման ընթացքում: Տեսահոլովակները նույնպես օգնում են նյութը լավ ընկալելու և միտքը ավելի պարզ շարադրելու համար:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ ուսուցման հաջողությունն ու արդյունավետությունը պայմանավորված են մի շարք գործոններով ու բաղադրիչներով՝ ուսուցման ինտերակտիվ ու արդիական մեթոդների կիրառումն ուսուցիչների կողմից, դասարանի կառավարման կարողությունն ու հմտությունը, ուսումնական նպատակների ու ակնկալիքների որոշարկումը, սովորողների մոտ սովորելու դրդապատճառների խթանումը, ուսուցման կազմակերպումը փոքր ու մեծ խմբերով, սովորողների գնահատումը, նպատակների ու ծրագրերի գնահատումը, հեռահաղորդակցական ու տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման ընթացքում և այլն:

## 2. Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Այսօրվա դպրոցի նորարարական միտումներից մեկն այն է, որ այն խրախուսում է ստեղծագործական միտքը: Կրթական բարեփոխումների արդյունքում ուսուցիչը ոչ միայն պետք է գիտելիք փոխանցող լինի, այլ նաև ձևավորի գիտակից քաղաքացի, ով կկարողանա դիմակայել ժամանակակից աշխարհի մարտահրավերներին:

Ուսուցման մոտեցումները կարող են լայնորեն դասակարգվել ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոդելների մեջ: Առաջին դեպքում ուսուցիչները գլխավոր դերում են: Սովորողների հիմնական դերը պասիվ տեղեկատվություն ստանալն է, այս մոտեցման վերջնական նպատակն է թեսթավորումը և գնահատումը: Ուսուցիչների հիմնական դերը՝ իրենց գիտելիքներն ու տեղեկատվությունը աշակերտներին փոխանցելն է: Այս մոդելի մեջ ուսուցումը և գնահատումը դիտվում են որպես երկու առանձին մասեր: Ուսուցման աշակերտակենտրոն մոտեցման մեջ ուսուցիչները և աշակերտները ուսումնական գործընթացում հավասարապես ակտիվ դեր են կատարում: Ուսուցչի հիմնական դերն է ուսուցանել և նպաստել աշակերտի ուսուցմանն ու ընդհանուր նյութի ընկալմանը:

Որպեսզի դասավանդումն արդյունավետ լինի, ուսուցիչը պետք է ծանոթ լինի դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաներին, գիտենա, թե ինչպես են դրանք օգտագործվում, տեղյակ լինի, թե ինչպիսի առավելություններ է տալիս դրանց կիրառումը, ինչպես նաև պետք է կարողանա կարգավորել այն խնդիրները, որոնք կարող են ծագել դասավանդման գործընթացում:

Պետք է ոչ թե սահմանափակել երեխային օգտվելու տեղեկատվական տեխնոլոգիաներից, այլ երեխայի գիտակցական մակարդակը այնքան բարձրացնել, որ երեխան ինքը գիտակցի և կարողանա ընտրել իրեն անհրաժեշտ ու պիտանի տեղեկատվությունը:

Թիմային աշխատանքն ունի դրական ազդեցություն սովորելու ժամանակ, քանի որ այն ստեղծում է մի միջավայր, որտեղ սովորողներն իրար սովորեցնում և բացատրում են հասկացությունները : Այն ամրապնդում է տեղեկատվությունը, որը հսկվում է ուսուցչի կողմից: Թիմային աշխատանքի միջոցով աշակերտները հասնում են առավել բարձր արդյունքների, ձեռք են բերում այնպիսի հմտություններ, որոնք

կարևոր են մասնագիտական գործընթացի ժամանակ: Գնահատման գործընթացը նույնպես թիմային է և պետք է ապահովվի հետադարձ կապը: Այս մեթոդի շնորհիվ աշակերտները զարգացնում են միմյանց հետ շփվելու, քննարկելու, բացատրելու, հասկանալու կարողությունները : Թեման բաժանվում է մասերի և սովորողներին լայն հնարավորություն է տալիս հաղթահարելու առավել բարդ առաջադրանքները: Ուսուցիչն օգնում է նրանց նոր խնդիրները հաղթահարել յուրովի: Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել որոշակի դժվարություն ներկայացնող թեմաների և բարդ տեղեկատվություն հաղորդելու ժամանակ:

Դերախաղը գիտելիքն անձնավորելու փորձ է: Դերախաղը արժևորված մեթոդ է, որը խրախուսում է աշակերտներին՝ ավելի լավ գիտելիքներ ձեռք բերել: Այն հատկապես արդյունավետ է տարրական դասարաններում կիրառելիս: Աշակերտները դեր են խաղում՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեն, եթե սովյալ դերում կամ իրավիճակում հայտնվեին: Աշակերտի անձը փոխազդեցության մեջ է մտնում իր կողմից մարմնավորվող կերպարի հետ: Երբ աշակերտները որոշակի իրավիճակ են ներկայացնում, նրանք կարող են իրենց անձնական փորձը համադրել ներկայացվող գիտելիքին հաջորդիվ:

Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթն անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել: Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը<sup>1</sup>:

Աշակերտների մտահորիզոնը հարստացնում է ցուցահանդեսի դիտումը, օգնում է նրանց լավ յուրացնել թեման: Նախապես պետք է լավ պլանավորված լինի այցի թեման, նպատակը: Անհրաժեշտ է պատրաստել պաստառներ և դիդակտիկ նյութեր, որոնք կլինեն թեմային համահունչ: Զննման հմտությունների շնորհիվ

1.Տե՛ս՝ Նեմով Ռ.Ս. Հոգեբանություն, Գիրք 2, 1998, 608 էջ:

սովորողները կկարողանան մանրագնին նկարագրել յուրաքանչյուր առարկա: Ուսուցիչն ամեն ինչ պիտի ներկայացնի թեմային բնորոշ բառապաշարով, որը հետագայում պետք է օգտագործվի դասարանում: Սովորողները կարող են խմբավորվել ըստ թեմաների, որպեսզի իրենք նյութեր հայթայթեն տվյալ թեմաների շուրջ : Շատ օգտակար կլինի տրված թեման համացանցով ուսումնասիրելը: Ուսուցիչը պետք է այնպես անի, որ սովորողները մտապահեն այցի ժամանակ տրված տեղեկատվությունը :

Քանի որ ուսումնական առարկաներն ուսուցանում են տարբեր բնագավառներ, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Միջառարկայական կապերի հաստատումը նպաստում է գիտելիքների խոր և բազմակողմանի յուրացմանը, սովորողների աշխարհայացքի ձևավորմանը: Միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ երեխաներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ, յուրացնում մեծ ծավալով օգտակար նյութեր՝ ձեռք բերելով գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ: Ժամանակակից հասարակության մեջ օրեցօր աճում է տեղեկատվության որոնման, վերլուծության, մշակման, պահպանման, տարածման անհրաժեշտությունը, այսինքն, հատկապես արդիական է դառնում տեղեկատվության հետ աշխատելու աշակերտների մշակույթի դաստիարակության խնդիրը: Միջառարկայական կապերի ստեղծումն էական կարող է ազդել սովորողի բառապաշարի զարգացման ու հարստացման վրա: Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ պետք է տալ<sup>2</sup>:

Նախագծային աշխատանքը գործունեության տեսակ է, որն օգնում է զարգացնել սովորողների ստեղծագործական կարողությունները, նրանց մեջ ձևավորել թիմում 2.Տե'ս՝ Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 14:

աշխատելու հմտություններ: Նախագծերի նպատակն է թարմացնել և գործնականում կիրառել, ընդլայնել և խորացնել ստացված գիտելիքները: Նախագծի վրա աշխատանքը կարող է իրականացվել անհատապես, զույգերով կամ փոքր խմբերով:

Ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի եզակի փորձը և բնավորությունը, զարգացնի դրա անհատականությունն ու տաղանդները, քանզի յուրաքանչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ և սովորելու անհատական ոճ: Այս փաստը պետք է հաշվի առնել չափազանց բարձր կամ չափազանց թույլ ընդունակություններով աշակերտների պարագայում: Այսօր առավել, քան երբևէ, կարևոր է սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցումը: Կրթական հաստատությունը պետք է սովորողին ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ: Ստեղծագործական կարողությունները նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծումներ: Ստեղծագործական գործունեության մեթոդիկաներն օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու գործընթացը: Կ.Դ. Ուշինսկին նշել է, որ մանկավարժը պետք է աչալուրջ տարբերակի համառությունը, քմահաճույքը և ազատ գործունեության անհրաժեշտությունը, որպեսզի չճնշի երեխային<sup>3</sup>: Երեխաների ստեղծագործական գործունեության զարգացումը նպատակաուղղված է նրանց գիտակցական կյանքում ստեղծագործելու նախապատրաստման խնդիրների լուծմանը: Խմբերում շփվելով, տեղեկատվության վրա աշխատելով՝ սովորողները բացահայտում են ինքնուրույն ուսումնասիրության նոր հնարավորություններ: Ինտերակտիվ տեխնոլոգիաներն իրականացվում են դպրոցներում սեմինարների, բանավեճերի, քննարկումների միջոցով, որտեղ սովորողները կարող են ներկայացնել իրենց մտքերը, ունենալ քննադատական մոտեցում, սովորել վիճարկել իրենց կարծիքը:

3.Տե՛ս՝ Կ. Դ. Ուշինսկի, Մարդը որպես դաստիարակության առարկա, 1868, էջ 237:



Ուսումնական գործընթացում խաղն օգտագործվում է որպես ավելի լայն տեխնոլոգիայի տարր, դասի կամ արտադասարանական գործունեության մաս: Խաղերը կատարում են մի քանի գործառույթ՝ ժամանցային, բուժական, ախտորոշիչ, սոցիալական: Խաղի ընթացքում սովորողները զբաղվում են ազատ զարգացնող գործունեությամբ: Մանկավարժական խաղն ունի հստակ ձևակերպված նպատակ, որը ներկայացվում է խաղային խնդրի տեսքով:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ դպրոցի հիմնական խնդիրն ուսումնական գործունեություն իրականացնելուն ունակ (սովորելու կարողություն ունեցող) երեխայի ձևավորումն է: Դրան հասնելու արդյունավետ ուղիներից մեկը նորագույն տեխնոլոգիաների իմացությունն ու ճիշտ կիրառումն է ուսուցչի կողմից:

### **3. Նորագույն տեխնոլոգիաների դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում:**

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչվում է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Կրթության և ՏՀՏ-ի փոխհարաբերության մյուս կողմը հենց կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումը, ուսուցման և ուսումնառության արդյունավետության մեծացումն է: Արդի տեխնոլոգիաների նշանակության աճը և դրանց տիրապետելու անհրաժեշտությունը բերում են զրագիտության նոր, ավանդականից տարբեր հասկացություն, մեծ փոփոխության է ենթարկվում նաև սովորելու և սովորեցնելու բնույթը: ՏՀՏ-ի ներդրման և կիրառության տեսանկյունից ամենաբարդը դպրոցն է:



Կրթությունն ամենազգայուն ու կարևոր ոլորտներից է, որի վրա ազդեցությունները լայն մասսաների համար ակնառու են ու զգալի: Մանկավարժության մեջ կիրառվում SS այնպիսի հնարավորություններ, ինչպես էլ.հասցե, Վիկիպեդիա: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների հիմնական նպատակն է՝ իրագեկ, տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետ գործածելու ունակություն ունեցող, բարոյական և օրինապահ անհատի դաստիարակում, ով կկարողանա ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել տեղեկատվությունը և դրա հիման վրա ինքնուրույն որոշում կայացնել:

Կրթական համակարգում վերջին տարիներին տեղեկատվայնացումն արտահայտվում է հիմնականում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների՝ որպես դիդակտիկ միջոցների լայն կիրառմամբ, երբ ուսումնական գործընթացն ինքնին խթանում է սովորողների ճանաչողական ակտիվությունը, նպաստում է ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանն ու հիմնարար գիտելիքների ձեռքբերմանը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման գործընթացում առաջացնում է մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են համապատասխան ծրագրային ապահովման մշակմամբ, էլեկտրոնային միջոցների բովանդակային հագեցվածությամբ և ուսուցման ոլորտում դրանց օգտագործմամբ: Էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրը տեղեկատվական կրթական միջավայրի ստեղծումն ու արդյունավետ

օգտագործումն է: Ուսուցման գործընթացում S2S-ի ներդրումը հանգեցնում է էական փոփոխության՝ ավանդական մեթոդները փոխարինելով ժամանակակից մեթոդներով, հնարներով, համադրելով ավանդական ու ժամանակակից մեթոդները և այլն:

Էլեկտրոնային ուսուցման կարևոր հիմնախնդիրներից է դասավանդողի կողմից յուրաքանչյուր սովորողին ուսումնական գործունեության ընթացքում անհատական աջակցության կազմակերպումը: Դասավանդողի աջակցությունն արտահայտվում է ուսումնական գործունեության պլանավորմամբ, ուսումնական նյութի բովանդակության վերաբերյալ խորհրդատվությամբ, նախագծային ու հետազոտական աշխատանքների կատարմամբ, թեստավորմամբ, գնահատմամբ և այլն: Ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ առաջնային պահանջների թվում է յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մոտեցումը: S2S զարգացումները նպաստում են տեղեկատվական հեռահաղորդակցմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է հեռավար ուսուցման կիրառման հնարավորությունների արդյունավետ իրականացմանը: Էլեկտրոնային փոստը լայնորեն կիրառվում է նաև հեռավար ուսուցման ժամանակ հետադարձ կապերի հաստատման ու համակարգման համար: Այն շահավետ է օգտագործել նաև դասավանդողի և սովորողների արդյունավետ համագործակցության համար:

Դասավանդողը սովորողի կրթական գործը կազմակերպողն է, նրան աջակցող ու գնահատող գործընկեր: Տարրական դասարաններում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները կիրառում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար: Ուստի, էլնելով ժամանակակից դպրոցի պահանջներից, անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանումը:

Մարդու միտքը միշտ ձգտում է ստեղծել ցանկացած գործունեության համար հարմար միջավայր, իսկ համակարգիչն առաջարկում է նախապես և մեծապես մշակված միջավայրեր: Վերջին տարիներին համակարգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը:

Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և բացառիկ այլ հնարավորությունները՝ դասը կարելի է դարձնել ավելի մատչելի, ընկալելի, դիտողական:

Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները, այս դեպքում տեխնոլոգիաները նպաստում են, որ սովորողները բանավիճեն, քննարկեն, սեփական կարծիք արտահայտեն և այլն: Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները: Տեխնոլոգիան կարող է նաև զարգացնել սովորողների գեղարվեստական հմտությունները:

Հայտնի մարդկանց կյանքի մասին տեղեկություններ իմանալու և անձնական կյանքը նկարագրելու համար կարելի է կիրառել հարցերի ձևեր: Ուսուցիչը պատրաստում է կարճ թեստ հայտնի մարդու կյանքի մասին: Լեզվի մակարդակը և թեստի դժվարությունը կարող են համապատասխանեցվել աշակերտների մակարդակին և տարիքին: Աշակերտները կատարում են թեստային աշխատանքը՝ որոնելով տեղեկությունները համացանցում: Թեստն ավարտելուց հետո ամբողջ դասարանը ստուգում է պատասխանները:

Առաջադրանքը հետագայում կատարելու համար աշակերտները կարող են որոնել տեղեկություններ և նկարներ իրենց հայրենի քաղաքի մասին և ներբեռնված տեքստը թարգմանել պահանջված լեզվով: Թարգմանության համար թույլատրվում է օգտվել համացանցում առկա միավեգու և երկլեգու բառարաններից:

Գիտնականները եկել են այն եզրակացության, որ ոչ միայն հեռուստացույց նայելն է վնասակար, այլև հեռուստացույցի՝ պարզապես միացրած վիճակում լինելը: Երեխան դրանից նյարդային է դառնում, կովարար և ջղային, զայրացկոտ: Ամեն առիթով երեխան ոչ միայն լաց է լինում, այլև դադարում է լսել ծնողներին:

Բայց, մյուս կողմից չենք կարող ժխտել, որ սովորողներին հնարավորինս լավ կրթելու համար լավագույն միջոցներից մեկը հեռուստացույցն է, որը, ճիշտ օգտագործելու դեպքում, օգնում է սովորողին նյութը լավ ըմբռնել՝ համարվելով դասարանական

ակտիվ գործունեություններից մեկը: Հեռուստածրագրերը նաև սովորողներին ապահովում են իրական երկխոսությամբ, ճիշտ առոգանությամբ խոսքով:

Ուսուցիչը կարող է աշակերտներին տրամադրել անունների ցանկ, որտեղից նրանք կարող են ընտրություն կատարել՝ աշխատանքն առավել արագ և համակարգված կատարելու նպատակով: Նրանք կայքում որոնում են տեղեկություններ այն անձի մասին, ում ընտրել են և նրա վերաբերյալ կազմում են թեստ: Ի վերջո, նրանք տպում են թեստերը, փոխանակում և փորձում են լուծել դրանք: Թեստերը կարող են փոխանցվել մեկ աշակերտից մյուսը, և նրանք կարող են քվեարկել ամենահետաքրքիր կամ լավագույն թեստի օգտին:

Երբ երեխան պարբերաբար նայում է դաժան սցենարներով ֆիլմեր, տեսարաններ, հուզական արձագանքները նման երևույթների նկատմամբ թուլանում են: Այսպես, երեխան աստիճանաբար սովորում է բռնությանը և սկսում է սառնասրտորեն այդ ամենը վերարտադրել:

Բայց մյուս կողմից ֆիլմերն ու տեսանյութերը նույնպես հարմարավետ են, հասկապես կարճամետրաժ ֆիլմերը, որոնք զարգացնում են հասկանալու կարողությունները և հարստացնում բառապաշարը: Օտարալեզու ֆիլմերն օգնում են աշակերտներին՝ խոսել պարզ և ճիշտ արտասանությամբ: Միջին դասարանների աշակերտները սիրում են կարճամետրաժ մուլտֆիլմեր և անիմացիաներ դիտել, մինչդեռ ավագ դասարաններում աշակերտներն օգտվում են նորությունների հեռարձակումների կայքերից: Այստեղից հետևություն, որ ցանկացած տեխնոլոգիա պիտի կարողանալ ճիշտ ընտրել և սովորողին ճիշտ ուղղորդել:

Շատ ուսուցիչներ օգտագործում են սահիկաշարք (slides) դասապրոցեսի ժամանակ: Այն նախապես պետք է կառուցված լինի դասի թեմային համահունչ: Այն պետք է հնարավորինս պարզ և մատչելի պատրաստել: Յանկալի է առանձին նախադասություններ և բառեր օգտագործել, տառերի չափը մեծ ընտրել, կարևոր միտքը շեշտելու համար գույներ օգտագործել: Կարելի է պատրաստել աղյուսակներով կամ դիագրամներով: Առավել հարմար է հորիզոնական

դիրքը: Յուրաքանչյուր սահիկաշարք պետք է ունենա սկիզբ, մեջտեղ և ավարտ և տևի 15-20 րոպե:

Աշակերտների ուշադրությունը գրավելու համար պետք է հաճախակի փոփոխել մեթոդները: Դասարանային ամսագրերը կարող են լինել արդյունավետ դասավանդման միջոց, որոնք կփոխարինեն տեքստերին: Կարելի է բազմացնել, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ունենա մի օրինակ, օգտագործել կազմի պատկերը՝ «մտազրոհ» մեթոդով մտապահելու համար այն բառերը, որոնք կան այդ պատկերի վրա: Սովորողները իրենք կարող են ընտրել թեմաները և դուրս գրել կարևոր մտքերը: Կարելի է ընտրություն կատարել մի քանի ամսագրերից, նույնիսկ կազմի պատկերով և քվեարկության միջոցով:

«Վենի դիագրամը» արդյունավետ միջոց է՝ նկարագրելու, համեմատելու և խմբավորելու համար տարբեր բաներ՝ ըստ իրենց բնորոշ գծերի: Կարելի է նկարագրել տարբեր առարկաներ, մարդկանց, պատմական իրադարձություններ, գաղափարներ:

Խաչբառների լուծումը պահանջում է բազմաթիվ կարևոր հմտություններ, որոնք ներառում են բառարան, ուղղագրություն: Սովորողը նախ պետք է հասկանա տերմինները, ապա՝ պահանջը: Այլ կարևոր հմտություններից են ընտրություններն արժևորելը, հետևություններ անելը: Այն նման է խաղի, համարվում է ակտիվ ուսուցում և շատ աշակերտների է ներառում դասապրոցեսի մեջ՝ զարգացնելով ակտիվ բառապաշարը:

Շրջագայությունը դասարանում և ցուցահանդեսի դիտումը հարստացնում է աշակերտների մտահորիզոնը, օգնում նրանց՝ լավ յուրացնել թեման: Պետք է պատրաստել պատի պաստառներ և բացիկներ, լուսանկարներ թեմային համահունչ, ներկայացնել թեմային բնորոշ բառապաշար, որը պետք է օգտագործվի դասարանում՝ շրջագայության ժամանակ: Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր պաստառը: Յուրաքանչյուր աշակերտի տրվում է 2-3 րոպե ներկայացնելու համար: Ցուցահանդեսը լինում է դասարանում, պաստառները

կախվում են պատերին: Յուրաքանչյուր աշակերտի հանձնարարվում է նոր տեղեկություն բերել տարբեր առարկաների վերաբերյալ՝ մայրենի, երաժշտություն, նկարչություն և այլն: Փոխկապակցելով տարբեր առարկաները՝ աշակերտները կապ են հաստատում տվյալ առարկայի հետ՝ առավել հետաքրքիր դարձնելով դասը:

Այսպիսիով, եկանք եզրակացության, որ էլեկտրոնային ուսուցման համակարգերը միավորում են էլեկտրոնային ուսուցման կազմակերպման հիմնական գործառույթները՝ ուսումնական աշխատանքի ինքնուրույն կազմակերպման գործընթացում աջակցություն սովորողներին, սովորողների և դասավանդողների անհատական ու խմբային փոխազդեցության կազմակերպումը, սովորողների միջանկյալ ու վերջնական թեստավորումը, ուսուցման գործընթացի հեռավար կազմակերպումը:

#### 4. Եզրակացություն:

Վերը գրվածից եզրակացնում ենք, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ և համակարգված կիրառումը նպաստում է սովորողների գիտելիքների ու հմտությունների զարգացմանը, ազդում հոգեբանական զարգացման վրա: Էլեկտրոնային ուսուցման համար սովորողը պետք է ձեռք բերի տեխնոլոգիական միջոցների օգտագործման հմտություններ, տեղեկատվական վիթխարի հոսքերում կողմնորոշվելու կարողություն, հաղորդակցական մշակույթ: Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են օգնել ուսուցչին՝ հնարավորություն տալով նրան խնայել ժամանակը:

Ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանումը: Ուսուցիչը նորագույն տեխնոլոգիաների կիրառությամբ պիտի կարողանա նպաստել սովորողների ստեղծագործական հմտությունների զարգացմանը:

Մեթոդների ընտրության տարբերակները բազմաթիվ են, և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Գիտնականների վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ համացանցը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ մտածողության և զգացմունքների վրա՝ առաջացնելով նույնիսկ հոգեկան հիվանդություններ:

Ուսուցիչը պետք է նոր տեխնոլոգիաներ և մեթոդներ կիրառելու հարցում գրազետ լինի, որպեսզի դասավանդվող առարկան կարողանա լուծել կրթության առջև ծառայած խնդիրները: Ուսուցման ռազմավարությունը հնարավոր է դարձնել բազմազան՝ դասարանում տեղեկատվական տեխնոլոգիաները ինտեգրելով: Ուսուցման պրոցեսում առկա են բազմաթիվ նորագույն մեթոդներ, որոնք արդյունավետ են դասարանում օգտագործելու համար: Բոլոր այս



մեթոդները պահանջում են նախապատրաստական մանրակրկիտ աշխատանք: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Ուստի պիտի կարողանալ նորագույն տեխնոլոգիաները և մեթոդները, հնարները, փոքր աշխատանքային խմբերը արդյունավետ կիրառել:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ մեղիակրթությունը և մեղիադաստիարակությունը դարձել են դարի հրամայական: Բոլոր զարգացած երկրներում առաջնային տեղ է հատկացվում մեղիագրագիտությանը, որը մարդկանց տալիս է ինֆորմացիայի սինթեզի, քննադատաբար գնահատման և վերլուծություն կատարելու հմտություններ: Մեղիագրագիտությունը անհրաժեշտ է բոլորին, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաներին: Եթե նախադպրոցական կամ կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ինչ-որ չափով վերահսկվում են ծնողների կողմից, ապա հիմնական և ավագ դպրոցի սովորողները առավելապես ազատ են իրենց ընտրությունների և որոշումներ կայացնելու հարցում, հետևապես այստեղ է անհրաժեշտ մեղիադաստիարակությունը: Նորագույն տեխնոլոգիաներից ճիշտ և գրագետ օգտվելու համար անհրաժեշտ է ուսուցիչ-ծնող սերտ համագործակցությունը և վերահսկողությունը:

**4.Օգտագործված գրականության ցանկ:**

1.Կ. Դ. Ուշինսկի,Մարդը որպես դաստիարակության առարկա ,1868:

2.Բայյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան,1983:

3. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002:

4. Աստվածատրյան Մ. , Թերզյան Գ. , Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, 2004:

5. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Ղրիմյան, Ս. Խաչատրյան, Ն. Բայաթյան, Լ. Ալեքսանյան, Վ. Պուրուկուրու, Համագործակցային ուսուցում ,2006:

6. Հակոբյան Ֆ. , Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, Երևան, 2020: